

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
պարոն ԳԱԼՈՒՍՏ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սահակյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Հեղինե Բիշարյանի, Հովհաննես Մարգարյանի և Միեր Շահգեղյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Արտադպրոցական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-520-13.05.2014-ԳԿ-010/0) վերաբերյալ:

1. «Արտադպրոցական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի անվանումը հստակեցման կարիք ունի, քանի որ «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում (այսուհետ՝ օրենք) «արտադպրոցական կրթություն» հասկացություն կամ դրույթ չկա: Օրենքի 20-րդ հոդվածում ամրագրված է «արտադպրոցական դաստիարակություն» հասկացությունը, որտեղ ներկայացված են նաև արտադպրոցական դաստիարակության նպատակները և իրականացնող կազմակերպությունները (մանկապատանեկան ստեղծագործական և գեղագիտական կենտրոններ,

երաժշտական, նկարչական և արվեստի դպրոցներ, ակումբներ, պատանի հայրենասերների, տեխնիկների, բնասերների և տուրիստական կայաններ, մարզադպրոցներ, ճամբարներ և արտադպրոցական դաստիարակություն իրականացնող այլ կազմակերպություններ):

Նախագծում «արտադպրոցական կրթություն» հասկացությունը (2-րդ հոդվածի 2-րդ մաս) հիմնականում առնչվում է օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասում և 26-րդ հոդվածով ամրագրված՝ լրացուցիչ կրթական ծրագրերին և լրացուցիչ կրթությանը վերաբերող դրույթների հետ, ըստ որոնց լրացուցիչ կրթական ծրագրերը նպատակաուղղված են հիմնական ծրագրերից դուրս սովորողների ու մասնագետների կրթական պահանջմունքների բավարարմանը և նրանց որակավորման բարձրացմանը, ինչպես նաև սահմանված են լրացուցիչ կրթության խնդիրները և իրականացնող կրթական հաստատությունները: Իսկ օրենքի 13-րդ հոդվածով սահմանված ուսումնական հաստատության տիպերից է լրացուցիչ կրթության, այդ թվում՝ արտադպրոցական դաստիարակության ուսումնական հաստատությունը (13-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետ):

2. 2-րդ հոդվածի համաձայն արտադպրոցական ուսումնական կրթություն ստացողներ են հանդիսանում նշված հաստատությունների սաները, սովորողները և ունկնդիրները: Այս առումով անհրաժեշտ է նախագծի 2-րդ հոդվածում սահմանել նաև ունկնդիր համարվող անձանց հասկացությունը:

3. 3-րդ և 7-րդ հոդվածներն անհրաժեշտ է միավորել «Օրենքի խնդիրները» վերնագրի տակ:

4. 8-րդ հոդվածով սահմանված՝ արտադպրոցական կրթության ոլորտում պետական քաղաքականության սկզբունքները հստակեցման անհրաժեշտություն ունեն:

5. 9-րդ հոդվածի՝

1) 4-րդ ենթակետը կարիք ունի խմբագրման, քանի որ արտադարձացական կրթության գործառույթն ինքնին հանդիսանում է կրթության ոլորտի գործառույթ, ուստի նպատակահարմար է ոլորտում հսկողության (այլ, ոչ թե վերահսկողության) լիազորությունը վերապահել միայն կրթության ոլորտի լիազոր մարմնին, հակառակ պարագայում ստացվում է, որ նույն հաստատությունը ենթակա է հսկողության կրթության ոլորտի լիազոր մարմնի, պետական կառավարման այլ մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից.

2) 5-րդ մասով նախատեսվում են արտադարձացական ուսումնական հաստատությունների արտահերթ պետական ատեստավորման վերաբերյալ դրույթներ՝ նշելով, որ արտահերթ ատեստավորումը, որպես բացառություն, կարող է իրականացվել պետական կառավարման մարմնի կամ պետական այլ մարմինների որոշմամբ: Այդ առումով պարզ չէ, թե արտահերթ պետական ատեստավորումը որ դեպքերում և ինչ կարգով է իրականացվելու: Միաժամանակ պարզ չէ, թե նշված մասում ինչ բացառության մասին է խոսքը: Պարզ չէ նաև, թե որոնք են այն պետական կառավարման այլ մարմինները, որոնց որոշմամբ անցկացվելու է արտադարձացական ուսումնական հաստատությունների արտահերթ պետական ատեստավորում: Այդ առումով անհրաժեշտ է հստակ սահմանել արտահերթ ատեստավորում անցկացնելու դեպքերը՝ նախատեսելով դրույթներ ատեստավորման անցկացման կարգի վերաբերյալ, ինչպես նաև անհրաժեշտ է հստակ նշել ատեստավորում անցկացնելու մասին համապատասխան որոշում ընդունելու իրավասություն ունեցող մարմիններին.

3) 6-րդ մասում նշված պետական կառավարման մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների գործառույթների առանձնահատկությունները նկատի ունենալով՝ անհրաժեշտ է նշված մարմինների իրավասությունները նախատեսել առանձին հոդվածներով: Բացի դրանից՝ 6-րդ մասի բովանդակությունից անհասկանալի

է, թե ոչ պետական արտադրողական ուսումնական հաստատությունների պահպանման համար անհրաժեշտ ծախսերն ինչ միջոցներով են ֆինանսավորվելու, ինչ կարգով և հիմունքներով պետք է իրականացվի ֆինանսավորումը: Միաժամանակ գտնում ենք, որ ոչ պետական արտադրողական ուսումնական հաստատությունների պահպանման համար անհրաժեշտ ծախսերի ֆինանսավորումը լրացուցիչ հիմնավորման կարիք ունի:

Նույն մասի՝

ա. «է» ենթակետով նախատեսված արտադրողական ուսումնական հաստատությունների մանկավարժների ատեստավորման գործառույթի և՛ պետական կառավարման մարմիններին, և՛ տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահելն ընդունելի չէ: Մանկավարժների արդյունավետ ատեստավորում հնարավոր կլինի կազմակերպել միայն, եթե այն իրականացվի պետական լիազոր մարմնի կողմից՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով: Բացի դրանից՝ նախագծում անդրադարձ չկա ատեստավորումը չհանձնելու իրավական հետևանքներին,

բ. «ը», «թ» և «ի» ենթակետերն անհրաժեշտ է հանել, քանի որ նշված գործառույթները սույն օրենքի կարգավորման առարկան չեն հանդիսանում,

գ. «ժ» ենթակետն անհրաժեշտ է հանել, քանի որ նշված գործառույթն արդեն իսկ կարգավորվում է 9-րդ հոդվածի 5-րդ կետով.

4) 6-րդ մասի կետերով նախատեսվում են դրույթներ տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունների վերաբերյալ: Այդ առումով, եթե նշված կետերով նախատեսված տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված լիազորությունները հանդիսանում են պետության կողմից պատվիրակված լիազորություններ, ապա անհրաժեշտ է նկատի ունենալ, որ առաջանում է պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների իրականացման ֆինանսավորման խնդիր, քանի որ «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի

Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածից բխում է, որ պետության պատվիրակված լիազորություններն ամբողջովին և պարտադիր ֆինանսավորվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից՝ պետության պատվիրակված լիազորությունների ֆինանսավորման նպատակով նախատեսված հատկացումների հաշվին: Այդ առումով նախագծով պետք է կարգավորվեն նաև նշված լիազորությունների ֆինանսավորման հետ կապված հարաբերությունները:

Միաժամանակ «է» կետում հղում է կատարվում «սահմանված կարգին», որով կազմակերպվելու են արտադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողների ատեստավորումը և որակավորման բարձրացումը, մինչդեռ պարզ չէ, թե ինչ կարգի մասին է խոսքը:

Նույնը վերաբերում է նախագծի 20-րդ հոդվածի 3-րդ մասում կատարված «սահմանված կարգով» հղմանը:

6. 10-րդ հոդվածի 1-ին կետի երկրորդ պարբերությամբ կառավարման կոլեգիալ մարմնի նախատեսման հարցը նպատակահարմար է թողնել տվյալ հաստատության հայեցողությանը:

7. 11-րդ հոդվածի՝

1) 3-րդ մասով նպատակահարմար չէ արտադպրոցական ուսումնական հաստատությունների ցանկի թվարկումը, քանի որ ժամանակի ընթացքում այն ենթակա է փոփոխությունների.

2) 4-րդ մասով նախատեսվում են մասնագիտացված արտադպրոցական ուսումնական հաստատությունների գործունեության ուղղվածության վերաբերյալ դրույթներ, մինչդեռ պարզ չէ, թե գործունեության ինչ ուղղվածության կամ բնագավառների մասին է խոսքը:

8. 13-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսվում է ստեղծել արտադարձացական ուսումնական հաստատության մասնաճյուղեր: Մասնաճյուղն իրավաբանական անձ չէ և գործում է ուսումնական հաստատության հաստատած կանոնադրության համաձայն, իսկ նախագծի 11-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն արտադարձացական ուսումնական հաստատությունը նաև հիմնարկի կարգավիճակ ունեցող կազմակերպություն է: Փաստորեն, ստացվում է, որ հիմնարկը կարող է ստեղծել մասնաճյուղեր, մինչդեռ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 61-րդ հոդվածի համաձայն մասնաճյուղ է համարվում իրավաբանական անձի գտնվելու վայրից դուրս տեղակայված նրա առանձնացված ստորաբաժանումը: Մասնաճյուղերն իրավաբանական անձինք չեն ու գործում են իրավաբանական անձի հաստատած կանոնադրությունների հիման վրա, իսկ 62-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հիմնարկն իրավաբանական անձ չէ և գործում է իրավաբանական անձի հաստատած կանոնադրության հիման վրա: Հետևաբար՝ արտադարձացական ուսումնական հաստատությանը՝ հիմնարկին, նախագծով մասնաճյուղեր ստեղծելու իրավասություն վերապահելը չի բխում Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 61-րդ և 62-րդ հոդվածների պահանջներից:

9. 15-րդ և 20-րդ հոդվածների և 16-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներն օրենքի կարգավորման առարկան չեն:

10. 17-րդ հոդվածով սահմանված՝ ուսումնադաստիարակչական գործընթացի մասնակիցների ցանկը լրացման և խմբագրման անհրաժեշտություն ունի:

11. 18-րդ հոդվածի 5-րդ մասով և 19-րդ հոդվածի 4-րդ մասի երկրորդ պարբերությամբ նախատեսված հարաբերություններն արդեն իսկ կանոնակարգված են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

12. 22-րդ հոդվածի 2-րդ մասում անհասկանալի է միայն պետական արտադարձացական ուսումնական հաստատությունների մանկավարժների որակավորման բարձրաց-

ման պահանջը, քանի որ օրենքի նախագծի 9-րդ հոդվածի համաձայն՝ արտադարձական ուսումնական հաստատությունները կարող են լինել նաև համայնքային ենթակայության:

Նույն դիտողությունը վերաբերում է նաև օրենքի նախագծի 24-րդ հոդվածին:

13. 24-րդ հոդվածի 4-րդ մասի երկրորդ պարբերությունում և 28-րդ հոդվածում «օրենսդրությամբ» բառն անհրաժեշտ է փոխարինել «օրենքով» բառով՝ նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 83.5-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջները, որոնց համաձայն բացառապես Հայաստանի Հանրապետության օրենքներով են սահմանվում իրավաբանական անձանց պատասխանատվության ենթարկելու կարգը, հարկադրանքի միջոցներն ու դրանք կիրառելու կարգը:

Առաջարկում ենք նախագծի 24-րդ հոդվածը «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին» բառերից հետո լրացնել «համայնքային արտադարձական կրթության ֆինանսավորումն իրականացվում է համայնքային միջոցների հաշվին» բառերով:

14. 26-րդ կետի 2-րդ մասը հստակեցման կարիք ունի, մասնավորապես, պարզ չէ, թե ինչ լիցենզավորման ենթակա գործունեության տեսակի մասին է խոսքը:

15. Օրենքի նախագծի «Եզրափակիչ դրույթներ» գլուխն անհրաժեշտ է համապատասխանեցնել «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին, որոնց համաձայն «Հայաստանի Հանրապետության օրենքներում նորմերը ներկայացվում են հերթական համար ունեցող հոդվածների տեսքով»:

16. Անհրաժեշտ է հստակեցնել նախագիծն ուժի մեջ մտնելու ժամկետը:

17. Հաշվի առնելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջները՝

1) 1-ին հոդվածում նշված «սահմանում է» բառերն անհրաժեշտ է փոխարինել «կարգավորում է» բառերով, իսկ «հիմքերը» բառը՝ «հիմքերի հետ կապված հարաբերությունները» բառերով:

2) 2-րդ, 3-րդ, 4-րդ, 7-րդ հոդվածների կետերի, 8-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի կետերի, 9-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ և 6-րդ մասերի կետերի, 13-րդ հոդվածի 3-րդ մասի կետերի, 14-րդ հոդվածի 1-ին մասի կետերի, 15-րդ հոդվածի, 17-րդ հոդվածի 1-ին մասի կետերի և 24-րդ հոդվածի 3-րդ մասի կետերի համարակալումն անհրաժեշտ է վերանայել:

3) 3-րդ հոդվածի 3-րդ մասում «նորմատիվ-իրավական» բառերը փոխարինել «իրավական» բառով:

Նույն դիտողությունը վերաբերում է նաև օրենքի նախագծի 9-րդ հոդվածի 6-րդ մասի «ը» կետին, 13-րդ հոդվածի 3-րդ մասի «զ» կետին, 18-րդ հոդվածի 1-ին մասին, 17-րդ հոդվածի 1-ին մասի երրորդ պարբերությանը և 24-րդ հոդվածի 3-րդ մասի առաջին, երրորդ պարբերություններին և այլն:

4) 8-րդ հոդվածի 2-րդ մասի «զ» կետից անհրաժեշտ է հանել «ձեռնարկությունների» բառը:

5) 11-րդ հոդվածի 4-րդ մասում «համալիր և մասնագիտացված» բառերն անհրաժեշտ է փոխարինել «համալիր կամ մասնագիտացված» բառերով:

6) 18-րդ հոդվածի 2-րդ մասից անհրաժեշտ է հանել «՝ օրենսդրությանը» բառը:

7) 25-րդ հոդվածի 2-րդ մասից անհրաժեշտ է հանել «օպերատիվ կառավարման» բառերը:

8) «Եզրափակիչ դրույթներ» գլխի վերնագիրը «եզրափակիչ» բառից հետո անհրաժեշտ է լրացնել «և անցումային» բառերով:

18. Նախագծում օգտագործված են Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չսահմանված և հստակեցման կարիք ունեցող արտահայտություններ, մասնա-

վորապես, «ունկնդիրներ», «միջոցառողսական ուսումնասիրտադրական կոմբինատ», «արտադրողական ուսումնական հաստատությունների արտահերթ ատեստավորում», «Հայաստանի քաղաքացու ցանկալի դիմանկարի կերտումը» և այլ արտահայտություններ:

19. Նախագծի ընդունումը՝

1) ենթադրում է այլ օրենքներում փոփոխությունների իրականացում.

2) կհանգեցնի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից լրացուցիչ ծախսերի անհրաժեշտության, (ֆինանսական գնահատականը բացակայում է), որի նպատակով միջոցներ նախատեսված չեն ինչպես Հայաստանի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեով, այնպես էլ Հայաստանի Հանրապետությունում պետական միջնաժամկետ ծախսային ծրագրերի մշակման մշտապես գործող բարձրագույն խորհրդի 2014 թվականի ապրիլի 2-ի N23.6/191439-14 որոշմամբ հաստատված՝ կրթության ոլորտի գծով 2015-2016 թվականների ճշգրտված և 2017 թվականի կողմնորոշիչ չափաքանակներում:

Միաժամանակ հարկ է նկատի ունենալ, որ օրենսդրական նախաձեռնությամբ առաջարկվող նախագիծը, ըստ էության, վերաբերում է լրացուցիչ և շարունակական կրթությանն ու ուսուցմանը:

«Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի իմաստով՝ արտադրողական կրթությունը լրացուցիչ կրթության բաղկացուցիչ մասն է և իրականացնում է տարաբնույթ, բազմաբովանդակ լրացուցիչ կրթադաստիարակչական ծրագրեր, ուստի նպատակահարմար է արտադրողական կրթությանը վերաբերող հարցերը քննարկել լրացուցիչ կրթության ենթատեքստում:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը դեմ է ներկայացված տեսքով օրենքի նախագծի ընդունմանը:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարար Արմեն Աշոտյանը:

Ներկայացնում ենք օրենքի նախագծի ընդունման դեպքում ընդունումից հետո օրենքի կատարումն ապահովող՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումների կամ այլ իրավական ակտերի ցանկը և ժամանակացույցը՝

1) 11-րդ հոդվածի 5-րդ մաս՝ արտադպրոցական ուսումնական հաստատությունների տեսակների ցանկի հաստատում՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ 2-ամսյա ժամկետում.

2) 12-րդ հոդվածի 1-ին մաս՝ արտադպրոցական ուսումնական հաստատությունների օրինակելի կանոնադրության հաստատում՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ 2-ամսյա ժամկետում.

3) 18-րդ հոդվածի 5-րդ մաս՝ արտադպրոցական ուսումնական հաստատությունների սաների, սովորողների և ունկնդիրների՝ արտոնյալ կամ անվճար պայմաններով այցելելու կարգի սահմանում՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ 2-ամսյա ժամկետում.

4) 20-րդ հոդվածի 2-րդ մաս՝ արտադպրոցական ուսումնական հաստատությունների այլ տեսակների լրավճարների չափերի ու կարգի սահմանում՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ 2-ամսյա ժամկետում.

5) 9-րդ հոդվածի 5-րդ մաս՝ արտադպրոցական ուսումնական հաստատությունների պետական ատեստավորման կարգի հաստատում՝ Հայաստանի Հանրապետության կրթության պետական կառավարման լիազորված մարմինը՝ 3-ամսյա ժամկետում.

6) 9-րդ հոդվածի 6-րդ մասի «ա» կետ՝ արտադպրոցական ուսումնական հաստատությունների ֆինանսավորման նվազագույն նորմատիվների սահմանում՝ Հայաստանի

Հանրապետության կրթության պետական կառավարման լիազորված մարմինը՝ 3-ամսյա ժամկետում.

7) 16-րդ հոդվածի 3-րդ մաս՝ արտադպրոցական ուսումնական հաստատությունների ավարտական վկայականների ձևերի հաստատում՝ Հայաստանի Հանրապետության կրթության պետական կառավարման լիազորված մարմինը՝ 3-ամսյա ժամկետում.

8) 23-րդ հոդվածի 1-ին մաս՝ արտադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողների ատեստավորման կարգի հաստատում՝ Հայաստանի Հանրապետության կրթության պետական կառավարման լիազորված մարմինը՝ 3-ամսյա ժամկետում.

9) 26-րդ հոդվածի 1-ին մաս՝ պետական արտադպրոցական ուսումնական հաստատությունների կողմից մատուցվող վճարովի ծառայությունների մատուցման կարգի սահմանում՝ Հայաստանի Հանրապետության կրթության պետական կառավարման լիազորված մարմինը՝ 3-ամսյա ժամկետում:

Կից ներկայացվում են օրենքի նախագծի կարգավորման ազդեցության գնահատման եզրակացությունները:

Հարգանքով՝

ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

**ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ԳՆԱՀԱՏՄԱՆ**

**«Արտադպրոցական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի
նախագծի ընդունման դեպքում**

«Արտադպրոցական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունումն առողջապահության բնագավառի վրա ազդեցություն չի ունենա:

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**«Արտադպրոցական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի
նախագծի բնապահպանության բնագավառում կարգավորման**

1. «Արտադպրոցական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ օրենք) ընդունման արդյունքում մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

2. Օրենքի նախագծի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

3. Օրենքի նախագիծը բնապահպանության ոլորտին չի առնչվում, այդ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չի հակասում:

Օրենքի կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

**ՀԱԿԱԿՈՌՈՒՊՏԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
«Արտադպրոցական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի
նախագծի վերաբերյալ**

«Արտադպրոցական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծն իր մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չի պարունակում:

Եզրակացություն

**«Արտադպրոցական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի
վերաբերյալ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության
գնահատման**

«Արտադպրոցական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27.1 հոդվածի և ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի N 18-Ն որոշման համաձայն:

Նախագծի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է սոցիալական պաշտպանության ոլորտի և դրա առանձին ենթաօլորտների իրավիճակի բնութագրիչների և դրանց ինդիկատորների հիման վրա:

Նախագիծը՝

ա) ռազմավարական կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **դրական ազդեցություն**,

բ) շահառուների վրա կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **դրական ազդեցություն**:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**«Արտադարոցական կրթության մասին» ՀՀ օրենքի նախագծի՝ բյուջետային բնագավառում
կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ**

Նախագծով առաջարկվում է օրենքով սահմանել արտադարոցական կրթության ոլորտի պետական քաղաքականության հիմնական սկզբունքները, դրա իրավական, սոցիալ-տնտեսական, կազմակերպչական ու դաստիարակչական հիմքերը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ Նախագծի ընդունման ազդեցությունը պետական բյուջեի եկամուտների վրա կլինի չեզոք:

Նախագծի կարգավորման ազդեցության գնահատականը (ծախսերի մասով) հնարավոր է տալ ՀՀ կառավարության 05.04.2012 թ. կայացած նիստի N 13 արձանագրության 1-ին կետով հաստատված՝ “Իրավական ակտերի նախագծերի մշակման մեթոդական ցուցումներ” հավելվածի 14.4-րդ կետով պահանջվող տեղեկանքի՝ հաշվարկ-հիմնավորումներով, առկայության պարագայում:

Պ-520-13.05.2014-ԳԿ-010/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ԳԼՈՒԽ 1

Ընդհանուր դրույթներ

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

Սույն օրենքը ՀՀ Սահմանադրության եւ «Կրթության մասին» ՀՀ օրենքին համապատասխան սահմանում է Հայաստանի Հանրապետության արտադպրոցական կրթության ոլորտի պետական քաղաքականության հիմնական սկզբունքները, դրա իրավական, սոցիալ-տնտեսական, կազմակերպական եւ դաստիարակչական հիմքերը:

Հոդված 2. Հիմնական հասկացությունները

Սույն օրենքում օգտագործվող հիմնական հասկացություններն ունեն հետեւյալ իմաստները.

1. արտադպրոցական կրթության համակարգ - կրթական ենթահամակարգ, որը ներառում է անկախ սեփականության ձեւից եւ կազմակերպական իրավական տեսակից արտադպրոցական ուսումնական հաստատություններ, արտադպրոցական կրթության կենտրոններ, արտադասարանային եւ արտաուսումնական հաստատություններ, այդ թվում միջդպրոցական ուսումնաարտադրական կոմբինատներ, հանրակրթական ուսումնական հաստատությունների, ուսումնա-արտադրական կոմբինատների եւ այլ ուսումնական հաստատությունների բազայի վրա ստեղծված խմբակներ, բաժանմունքներ, ակումբներ, միավորումներ, մշակութային-կրթական, մարմնամարզական-կազդուրողական, սպորտային եւ այլ հիմնարկներ, հիմնադրամներ, ընկերություններ, որոնց գործունեությունը կապված է արտադպրոցական կրթության հետ, արտադպրոցական կրթության կառավարման համապատասխան մարմիններ եւ գիտամեթոդական հաստատություններ:
2. արտադպրոցական կրթություն - գիտելիքների, ունակությունների եւ հմտությունների ընդհանրություն, որոնք սաները, սովորողները եւ ունկնդիրներն ստանում են արտադպրոցական, հանրակրթական եւ այլ ուսումնական հաստատություններում՝ ուսումնառությունից ազատ ժամանակ:
3. արտադպրոցական ուսումնական հաստատություն - արտադպրոցական կրթության համակարգի բաղկացուցիչ, որը գիտելիքներ է հաղորդում՝ ձեւավորելով ունակություններ եւ հմտություններ հետաքրքրությունների ուղղությամբ, ապահովում է անհատի մտավոր, հոգեւոր ու ֆիզիկական զարգացումը, նախապատրաստում մասնագիտական եւ հասարակական գործունեությանը, պայմաններ ստեղծում բովանդակային ժամանցի կազմակերպման եւ սոցիալական պաշտպանության համար սաների, սովորողների եւ ունկնդիրների ընդունակություններին, կարողություններին եւ առողջական վիճակին համապատասխան:
4. արտադպրոցական ուսումնական հաստատության մասնաճյուղերը - արտադպրոցական հաստատության տարածապես առանձնացված ստորաբաժանումներ, որոնք իրականացնում են նույնպիսի գործունեություն, ինչպիսին հիմնական արտադպրոցական հաստատությունն ամբողջությամբ կամ դրա առանձին ուղղություններով:
5. արտադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողների բեռնվաճությունը - արտադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատակիցների կողմից ուսումնա-դաստիարակչական գործընթացի իրականացման համար նախատեսված ժամանակը:

6. արտադարձական ուսումնական հաստատության կրթական գործունեություն - գիտելիքների հաղորդման, արտադարձական կրթության տարբեր ուղղությունների գծով ունակությունների եւ հմտությունների ձեւավորման, անձի տվյալներին եւ պահանջներին համապատասխան մտավոր եւ ստեղծագործական ընդունակությունների, ֆիզիկական որակների զարգացման գործընթաց:

7. սաներ - անձինք, ովքեր հաճախում են արտադարձական ուսումնական հաստատության խմբակներ, ակումբներ, ստեղծագործական միավորումներ, բաժանմունքներ՝ իրենց հետաքրքրությունների, ընդունակությունների եւ հակումների ուղղությամբ, ստանում միջմասնագիտական նախապատրաստություն:

8. սովորողներ - անձինք, որոնք հաճախում են արտադարձական ուսումնական հաստատության դասարաններ եւ այլ ստեղծագործական միավորումներ, որտեղ ուսումնա-դաստիարակչական աշխատանքը կազմակերպված է դաս - դասարանային կամ այլ համակարգի ձեւով:

Հոդված 3. «Արտադարձական կրթության մասին» օրենքի խնդիրները

Սույն օրենքի խնդիրներն են.

1. քաղաքացիների՝ արտադարձական կրթություն ստանալու իրավունքների ապահովումը,
2. արտադարձական կրթության նկատմամբ պետական քաղաքականության հիմնական սկզբունքների սահմանումը,
3. նորմատիվ-իրավական բազայի ստեղծումը արտադարձական կրթության հետագա զարգացման համար,
4. արտադարձական ուսումնական հաստատությունների գործունեության իրավական հիմքերի սահմանումը,
5. արտադարձական ուսումնական հաստատություններում կրթա-դաստիարակչական գործընթացի հիմնական ուղղությունների, բովանդակության եւ ձեւերի սահմանումը,
6. ուսումնա-դաստիարակչական գործընթացի մասնակիցների իրավունքների եւ պարտականությունների սահմանումը, արտադարձական կրթության մասին օրենսդրության խախտման համար պատասխանատվության ամրագրումը,
7. արտադարձական կրթության զարգացմանն ուղղված իրավաբանական եւ ֆիզիկական անձանց բարեգործական գործունեության պայմանների ստեղծումը,
8. սաների, սովորողների եւ ունկնդիրների արտադարձական կրթության բովանդակությունը, ձեւերը եւ մեթոդները սահմանող ուսումնական հաստատությունների, հիմնարկների, կազմակերպությունների եւ պետական կառավարման մարմինների միջեւ հարաբերությունների կարգավորումը,
9. արտադարձական ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողների, սաների, սովորողների եւ ունկնդիրների սոցիալական պաշտպանության համար պայմանների ստեղծումը:

Արտադարձական կրթությունն անընդհատ կրթության բաղկացուցիչ է եւ ուղղված է սաների, սովորողների եւ ունկնդիրների ընդունակությունների եւ հմտությունների զարգացմանը, նրանց հետաքրքրությունների, հոգեւոր պահանջների եւ պահանջմունքների բավարարմանը:

Հոդված 4. Արտադարձական կրթության կառուցվածքը

Արտադարձական կրթության կառուցվածքն են կազմում՝

1. արտադարձական կրթական հաստատությունները,

2. արտադարձական կրթության կենտրոնները՝ արտադասարանային եւ արտաուսումնական ժամանակահատվածում գործող հաստատությունները, այդ թվում միջդպրոցական ուսումնաարտադրական կոմբինատները,
3. հանրակրթական ուսումնական հաստատությունների, միջդպրոցական ուսումնաարտադրական կոմբինատների, մասնագիտական-տեխնիկական ուսումնական հաստատությունների բազայի հիման վրա ստեղծված խմբակները, բաժանմունքները, ակումբները,
4. մշակութային-կրթական, մարմնամարզական-կազդուրողական, սպորտային եւ այլ ուսումնական հաստատությունները, հիմնարկները,
5. հիմնադրամները, ընկերությունները, որոնց գործունեությունը կապված է արտադարձական կրթության հետ:

Հոդված 5. Արտադարձական կրթության իրավունքը

1. Սաները, սովորողները եւ ունկնդիրներն իրավունք ունեն ստանալ արտադարձական կրթություն՝ իրենց ընդունակություններին, տաղանդին, ճաշակին եւ հետաքրքրություններին համապատասխան:
2. Արտադարձական կրթությունը քաղաքացիներն ստանում են արտադասարանային եւ արտաուսումնառության ժամանակ՝ արտադարձական կրթության կենտրոններ հանդիսացող արտադարձական ուսումնական հաստատություններում եւ այլ ուսումնական հաստատություններում՝ անկախ ենթակայությունից եւ սեփականության ձեւից: Արտադարձական կրթությունը հիմնված է հաստատության եւ գործունեության տեսակի ընտրության կամավորության սկզբունքի վրա եւ իրականացվում է ծնողների կամ նրանց փոխարինող անձանց, աշխատանքային կոլեկտիվների, հասարակական կազմակերպությունների, ընկերությունների, հիմնադրամների մասնակցությամբ:
3. Օրինական հիմքերով Հայաստանում գտնվող օտարերկրյա քաղաքացիները եւ քաղաքացիություն չունեցող անձինք արտադարձական կրթություն ստանում են ՀՀ քաղաքացիների համար արտադարձական կրթություն ստանալու սահմանված կարգով:

Հոդված 6. Արտադարձական կրթության լեզուն

Արտադարձական կրթությունը, ուսուցումն ու դաստիարակությունն իրականացվում է «Լեզվի մասին» ՀՀ օրենքին համապատասխան:

Հոդված 7. Արտադարձական կրթության հիմնական խնդիրները

Արտադարձական կրթության հիմնական խնդիրներն են.

1. Հայաստանի քաղաքացու ցանկալի դիմանկարի կերտումը,
2. անձի ազատ զարգացումը եւ նրա հասարակական փորձի ձեւավորումը,
3. սաների, սովորողների եւ ունկնդիրների մոտ Սահմանադրության, մարդու եւ քաղաքացու իրավունքների եւ ազատությունների նկատմամբ հարգանքի, սեփական արժանիքների, իր գործողությունների համար օրենքի նկատմամբ պատասխանատվության զգացմունքի դաստիարակումը,
4. սաների, սովորողների եւ ունկնդիրների մոտ հայրենասիրության, հայ ժողովրդի, ինչպես նաեւ այլ ազգերի եւ ժողովուրդների ազգային արժեքների, ժողովրդական սովորույթների նկատմամբ հարգանքի դաստիարակումը,
5. սաների, սովորողների եւ ունկնդիրների մոտ հարգալից վերաբերմունքի դաստիարակումը ընտանիքի եւ տարեց մարդկանց նկատմամբ,

6. սաների, սովորողների եւ ունկնդիրների ստեղծագործ, մտավոր, հոգեւոր եւ ֆիզիկական զարգացման համար պայմանների ստեղծումը,
7. սաների, սովորողների եւ ունկնդիրների մոտ գիտակից եւ պատասխանատու վերաբերմունքի ձեւավորումը իր եւ շրջապատողների առողջության, անվտանգ գործելակերպի հմտությունների նկատմամբ,
8. կրթության կառուցվածքի այլ բաղկացուցիչների կողմից չապահովվող կրթական-մշակութային պահանջմունքների բավարարումը սաների, սովորողների եւ ունկնդիրների մոտ,
9. մասնագիտական ինքնորոշման եւ ստեղծագործական իրքնաիրացման մեջ սաների, սովորողների եւ ունկնդիրների պահանջմունքների բավարարումը,
10. ընդունակ, օժտված, տաղանդավոր եւ հանճարեղ սաների, սովորողների եւ ունկնդիրների բացահայտումը, զարգացումը եւ աջակցությունը,
11. սաների, սովորողների եւ ունկնդիրների ֆիզիկական զարգացման կատարելագործումը, սպորտի տարբեր բնագավառներում հավաքական խմբերի համար սպորտային հերթափոխների նախապատրաստումը,
12. սաների, սովորողների եւ ունկնդիրների ժամանցի կազմակերպումը, դրա նոր ձեւերի բացահայտումը,
13. կրթադաստիարակչական գործընթացի մասնակիցների մոտ գիտակցական վերաբերմունքի դաստիարակումը անձնական եւ շրջապատողների անվտանգության նկատմամբ,
14. սաների, սովորողների եւ ունկնդիրների առողջ կենսակերպի ձեւավորումը,
15. տեղեկատվական-մեթոդական եւ կազմակերպչական զանգվածային-աշխատանքների իրականացումը:

Հոդված 8. Արտադպրոցական կրթության ոլորտում պետական քաղաքականության սկզբունքները

1. Արտադպրոցական կրթության ոլորտում պետական քաղաքականության սկզբունքներն են՝
 - ա. արտադպրոցական կրթության մատչելիությունը՝ անկախ ռասայից, կրոնական եւ այլ համոզմունքներից, սեռից, ժողովրդական եւ սոցիալական ծագումից, գույքային դրությունից, բնակության վայրից, լեզվային կամ այլ հատկանիշներից,
 - բ. պետական արտադպրոցական ուսումնական հաստատությունների ֆինանսավորումը դրանց կառուցվածքին համապատասխան,
 - գ. արտադպրոցական ուսումնական հաստատությունների տեսակի, կրթության ձեւի եւ գործունեության տեսակների ընտրության կամավորությունը,
 - դ. կրթության գիտականությունը, աշխարհիկ բնույթը,
 - ե. սաների, սովորողների եւ ունկնդիրների իրավական եւ սացիալական պաշտպանվածությունը անձի ազատ, բազմակողմանի զարգացման նրանց ձգտումներում:
2. Արտադպրոցական կրթության ոլորտում պետական քաղաքականությունն ուղղված է՝
 - ա. սաների, սովորողների եւ ունկնդիրների կողմից արտադպրոցական կրթության ստացման համար պայմանների ստեղծմանը,

բ. պետական արտադարձական ուսումնական հաստատությունների ցանցի պահպանմանն ու զարգացմանը՝ առանց դրանց վերամասնագիտացման եւ շինությունները, սարքավորումները, տեխնիկան օտարելու իրավունքի,

գ. պետական կառավարման մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, ձեռնարկությունների, հաստատությունների, կազմակերպությունների, քաղաքացիների, ընտանիքների եւ հասարակական միավորումների ջանքերի համախմբմանը արտադարձական կրթության հետագա կայացման եւ զարգացման ուղղությամբ:

Գլուխ II

Արտադարձական կրթության կազմակերպումը

Հոդված 9. Արտադարձական կրթության կառավարման մարմինները: Պետական վերահսկողությունն արտադարձական ուսումնական հաստատությունների գործունեության նկատմամբ:

1. Պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմինները, որոնց իրավասության ոլորտում են գտնվում արտադարձական ուսումնական հաստատությունները եւ որոնք գործունեություն են իրականացնում արտադարձական կրթության ոլորտում, իրականացնում են նշված ուսումնական հաստատությունների գործունեության կառավարումը:

2. Արտադարձական կրթության պետական կառավարումն իրականացնում են՝

ա. կրթության պետական կառավարման լիազորված մարմինը,

բ. պետական կառավարման այլ մարմինները, որոնց իրավասության ոլորտում են գտնվում արտադարձական ուսումնական հաստատությունները,

գ. մարզային պետական մարմինները եւ նրանց ենթակա կառավարման մարմինները, որոնց իրավասության ոլորտում են գտնվում արտադարձական ուսումնական հաստատությունները,

դ. տեղական ինքնակառավարման մարմինները:

3. Կրթության պետական կառավարման լիազորված մարմինը պետական կառավարման այլ մարմինների մասնակցությամբ, որոնց իրավասության ոլորտում են գտնվում արտադարձական ուսումնական հաստատությունները՝

ա. մասնակցում է արտադարձական կրթության ոլորտում պետական քաղաքականության մշակմանը եւ իրականացմանը,

բ. ձեւավորում է արտադարձական կրթության զարգացման ծրագրերը,

գ. մշակում է արտադարձական ուսումնական հաստատությունների մասին դրույթները, պատրաստում արտադարձական կրթության նյութա-տեխնիկական, ֆինանսական ապահովման նորմատիվների մասին առաջարկություններ, մշակում նորմատիվ իրավական ակտեր՝ արտադարձական ուսումնական հաստատությունների մասնագետների, մանկավարժական աշխատողների համար սոցիալական երաշխիքներ սահմանելու ուղղությամբ,

դ. իրականացնում է արտադարձական ուսումնական հաստատությունների ուսումնամեթոդական ղեկավարումը, վերահսկողությունը եւ պետական տեսչական ստուգումը,

ե. իրականացնում է օրենքներով եւ այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված լիազորություններ:

4. Արտադարձական ուսումնական հաստատությունների գործունեության նկատմամբ պետական վերահսկողությունն իրականացվում է կրթության ոլորտի պետական կառավարման լիազորված

մարմնի, պետական կառավարման այլ մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների կողմից:

5. Արտադպրոցական ուսումնական հաստատությունների գործունեության նկատմամբ պետական վերահսկողության հիմնական ձեւը արտադպրոցական ուսումնական հաստատության պետական ատեստավորումն է, որն իրականացվում է ոչ պակաս, քան մեկ անգամ 5 տարվա ընթացքում՝ կրթության ոլորտի լիազորված պետական մարմնի կողմից սահմանված կարգով:

Արտադպրոցական ուսումնական հաստատությունների պետական ատեստավորման արդյունքները հրապարակվում են:

Արտադպրոցական ուսումնական հաստատությունների արտահերթ պետական ատեստավորումը, որպես բացառություն, կարող է անցկացվել միայն ոլորտի կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կամ պետական կառավարման այլ մարմինների որոշմամբ, որոնց իրավասության ոլորտում են գտնվում արտադպրոցական ուսումնական հաստատությունները:

6. Պետական կառավարման մարմինները եւ տեղական ինքնակառավարման մարմիններն իրենց իրավասությունների սահմաններում՝

ա. հաստատում են արտադպրոցական ուսումնական հաստատությունների ֆինանսավորման ծավալները ոչ ցածր, քան կրթության ոլորտի պետական կառավարման լիազորված մարմնի կողմից սահմանված կարգով որոշված նվազագույն նորմատիվները եւ ապահովում դրանց պահպանման համար անհրաժեշտ ծախսերի ֆինանսավորումը,

բ. ապահովում են արտադպրոցական ուսումնական հաստատությունների նյութատեխնիկական բազայի պահպանումն ու ամրապնդումը, դրանց հատկացված հողատարածությունների արդյունավետ օգտագործումը:

գ. սաների, սովորողների եւ ունկնդիրների համար ապահովում են պատշաճ պայմաններ ստեղծագործական գործունեության ընտրության համար՝ նրանց հետաքրքրություններին, ծնողների կամ վերջիններիս փոխարինող անձանց պահանջներին համապատասխան,

դ. կարող են սահմանել լրացուցիչ մանկավարժական դրույթներ, որոշել արտադպրոցական ուսումնական հաստատություններում սաների, ուսանողների եւ ունկնդիրների չափաքանակը,

ե. միջոցներ են ձեռնարկում սոցիալական օգնության եւ սոցիալական վերականգնման կարիք ունեցող սաներին, սովորողներին եւ ունկնդիրներին արտադպրոցական կրթության տարբեր ձեւերում ներգրավելու ուղղությամբ,

զ. ապահովում են սաների, սովորողների, մանկավարժական աշխատակիցների, մասնագետների եւ արտադպրոցական ուսումնական հաստատությունների այլ աշխատակիցների սոցիալական պաշտպանությունը,

է. սահմանված կարգով կազմակերպում են արտադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողների ատեստավորումը, որակավորման բարձրացումը,

ը. համակարգում են ընտանիքների, ձեռնարկությունների, հասարակական կազմակերպությունների, արտադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժական կոլեկտիվների գործունեությունը՝ սաների, սովորողների եւ ունկնդիրների կողմից արտադպրոցական կրթության ստացման ուղղությամբ,

թ. վերահսկողություն են իրականացնում արտադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժական կոլեկտիվների նկատմամբ, ընդհանրացնում եւ տարածում նրանց աշխատանքային փորձը,

ժ. իրականացնում են արտադարձական ուսումնական հաստատությունների պետական ատեստավորումը,

ի. նպաստում են հոգաբարձական եւ խնամակալական խորհուրդների, բարեգործական հիմնադրամների ստեղծմանը,

լ. իրականացնում են այլ լիազորություններ՝ ՀՀ Սահմանադրությանը, «Տեղական ինքնակառավարման մասին», «Կրթության մասին», ՀՀ օրենքներին եւ սույն օրենքին համապատասխան:

Հոդված 10. Արտադարձական ուսումնական հաստատության կառավարումը եւ ինքնակառավարումը

1. Արտադարձական ուսումնական հաստատության կառավարումն իրականացնում է նրա տնօրենը:

Արտադարձական ուսումնական հաստատության կառավարման կոլեգիալ մարմինը մանկավարժական խորհուրդն է, որի լիազորությունները սահմանվում է արտադարձական ուսումնական հաստատության կանոնադրությամբ:

2. Արտադարձական ուսումնական հաստատության հասարակական ինքնակառավարման մարմինը ուսումնական հաստատության կոլեկտիվի ընդհանուր ժողովն է /կոնֆերանսը/:

3. Արտադարձական ուսումնական հաստատությունում կարող են ստեղծվել որոշակի մասնագիտական ուղղվածություն ունեցող մեթոդական միավորումներ, որոնց լիազորությունները սահմանվում է տվյալ հաստատության կանոնադրությամբ:

Հոդված 11. Արտադարձական ուսումնական հաստատությունը

1. Պետական արտադարձական ուսումնական հաստատությունը հիմնարկի կամ իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպություն է : Իր գործունեության նպատակին համապատասխան պետական արտադարձական ուսումնական հաստատությունը կարող է իրականացնել վճարովի ծառայություններ:

2. Ոչ պետական արտադարձական ուսումնական հաստատությունները կարող են ունենալ օրենքով նախատեսված ցանկացած կազմակերպական-իրավական ձեւ:

3. Արտադարձական ուսումնական հաստատությունները կարող են գործել արտադարձական կրթություն իրականացնող կենտրոնների, համալիրների, պալատների, ակումբների, կայանների, ստուդիաների, արվեստի դպրոցների, մասնագիտացված գեղարվեստական ուսումնական հաստատությունների, սպորտային դպրոցների, օլիմպիական պահուստի մանկապատանեկան սպորտային դպրոցների, ըստ բնակության վայրի մարմնամարզական-սպորտային ակումբների, հաշմանդամների մարմնամարզական-կազդուրողական ակումբների, մանկական մարզադաշտերի, մանկական գրադարանների, պատկերասրահների, կազդուրողական հաստատությունների ձեւով:

4. Արտադարձական ուսումնական հաստատությունները կարող են լինել համալիր եւ մասնագիտացված:

Համալիր արտադարձական ուսումնական հաստատությունները սաների, սովորողների եւ ունկնդիրների հետ աշխատանքը կազմակերպում են արտադարձական կրթության տարբեր ուղղություններով /գեղարվեստական-գեղագիտական, զբոսաշրջիկության, բնապահուպանական, գիտա- տեխնիկական, փորձա-փորձարարական, մարմնամարզական-սպորտային կամ սպորտային, ռազմա- հայրենասիրական, գրադարանային-մատենագիտական, սոցիալ-վերականգնողական, կազդուրողական, հումանիտար/:

Համալիր արտադարձացական ուսումնական հաստատությունների թվին են դասվում պալատները, մանկապատանեկան տները, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնները:

Մասնագիտացված արտադարձացական ուսումնական հաստատություններն իրենց աշխատանքը կազմակերպում են արտադարձացական գործունեության որոշակի ուղղվածությամբ:

Մասնագիտացված արտադարձացական ուսումնական հաստատությունների թվին են դասվում զբոսաշրջիկության, գիտա-տեխնիկական, բնապահուպանական, սպորտային-կազդուրողական, գեղարվեստական-գեղագիտական ստեղծագործության, ռազմահայրենասիրական ուղղվածության կենտրոնները, ակումբները, պատանի զբոսաշրջիկների, բնախույզների, տեխնիկների կայանները, արվեստի դպրոցները, մասնագիտացված գեղարվեստական ուսումնական հաստատությունները, մանկապատանեկան սպորտային դպրոցները, կազդուրողական հաստատությունները:

5. Արտադարձացական ուսումնական հաստատությունների տեսակների ցանկը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

6. Արտադարձացական ուսումնական հաստատությունների ստեղծագործական միավորումները դասակարգվում են երեք մակարդակների՝

սկզբնական մակարդակ-ընդհանուր զարգացման ուղղվածությամբ ստեղծագործական միավորումներ, որոնք նպաստում են սաների, սավորողների եւ ունկնդիրների ընդունակությունների, ձիրքերի բացահայտմանը կամ նրանց հետաքրքրության զարգացմանը՝ ստեղծագործական գործունեության նկատմամբ,

հիմնական մակարդակ-սաների, սովորողների եւ ունկնդիրների կայուն հետաքրքրությունները զարգացնող, մասնագիտական կողմնորոշման մեջ պահանջմունքները բավարարող գիտելիքներ, գործնական կարողություններ եւ հմտություններ տվող ստեղծագործական միավորումներ,

բարձրագույն մակարդակ-ընդունակ եւ տաղանդավոր սաների, սովորողների եւ ունկնդիրների հետաքրքրությունների ուղղությամբ ստեղծագործական միավորումներ:

Հոդված 12. Արտադարձացական ուսումնական հաստատության կանոնադրությունը

1. Արտադարձացական ուսումնական հաստատությունների օրինակելի կանոնադրությունը հաստատվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից:

2. Արտադարձացական ուսումնական հաստատությունը արտադարձացական ուսումնական հաստատությունների օրինակելի կանոնադրության հիման վրա մշակում է իր կանոնադրությունը, որը հաստատվում է սեփականատիրոջ /հիմնադրի/ կողմից:

3. Արտադարձացական ուսումնական հաստատության կանոնադրությունում նշվում են հաստատության անվանումը, կազմակերպական-իրավական ձեւը, հաստատության գտնվելու վայրը, գործունեության առարկան եւ նպատակները, կառավարման կարգը, գույքի ձեւավորման աղբյուրները, ուսումնական հաստատության լուծարման դեպքում՝ գույքի տնօրինման կարգը: Կանոնադրությունը կարող է պարունակել Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող այլ դրույթներ:

Հոդված 13. Արտադարձացական ուսումնական հաստատության ստեղծումը, վերակազմակերպումը եւ լուծարումը

1. Արտադարձացական ուսումնական հաստատությունն ստեղծվում է հիմնադրի /հիմնադիրների/ որոշմամբ:

2. Արտադարձացական ուսումնական հաստատությունն ստեղծված է համարվում հիմնադրի /հիմնադիրների/ կողմից դրա կանոնադրությունը հաստատելու եւ օրենքով սահմանված կարգով պետական գրանցում ստանալու պահից:

3. Արտադարձակական ուսումնական հաստատության հիմնադիրներ կարող են լինել՝

ա. պետական կառավարման մարմինները,

բ. տեղական ինքնակառավարման մարմինները,

գ. ձեռնարկությունները, հաստատությունները, կազմակերպությունները եւ դրանց միավորումները՝ անկախ սեփականության ձեւից եւ ենթակայությունից,

դ. ՀՀ քաղաքացիները:

4. Արտադարձակական ուսումնական հաստատություններն ստեղծվում են հաշվի առնելով սոցիալ- տնտեսական, ազգային, մշակութային-կրթական պահանջմունքները, անհրաժեշտ ուսումնա-մեթոդական եւ նյութա-տեխնիկական բազայի, մանկավարժական կադրերի առկայությունը եւ սանիտարահիգիենիկ նորմերի, կանոնների եւ ստանդարտների պահպանումը:

5. Արտադարձակական ուսումնական հաստատությունը կարող է ստեղծել մասնաճյուղեր: Մասնաճյուղն իրավաբանական անձ չէ եւ գործում է ուսումնական հաստատության հաստատած կանոնադրության համաձայն:

6. Արտադարձակական ուսումնական հաստատության վերակազմակերպումը եւ լուծարումը կատարվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսդրությունը այլ օրենքներին համապատասխան:

Գլուխ III

Արտադարձակական կրթության կազմակերպումը արտադարձակական ուսումնական հաստատությունում

Հոդված 14. Արտադարձակական կրթության հիմնական ուղղությունները

Արտադարձակական կրթությունն արտադարձակական ուսումնական հաստատություններում կարող է իրականացվել հետևյալ ուղղություններով՝

1. գեղարվեստական-գեղագիտական. ապահովում է ստեղծագործական ունակությունների, տաղանդի զարգացում, սաների, սովորողների եւ ունկնդիրների կողմից գործնական հմտությունների ձեռքբերում, հայրենական եւ համաշխարհային մշակույթի ու արվեստի վերաբերյալ գիտելիքների տիրապետում,
2. զբոսաշրջիկության-գավառագիտության. ուղղված է սաներին, սովորողներին եւ ունկնդիրներին հայրենի երկրի եւ շրջակա միջավայրի, համաշխարհային քաղաքակրթության, սոցիալական կյանքի երեւույթների եւ աշխարհագրական, ժողովրդագրական, պատմական օբյեկտների ուսումնասիրման ակտիվ գործունեության մեջ ներգրավելուն, զբոսաշրջիկության եւ գավառագիտության վերաբերյալ գործնական կարողությունների եւ հմտությունների տիրապետմանը,
3. բնապահպանական-բնանկարագրական. նախատեսում է սաների, սովորողների եւ ունկնդիրների կողմից շրջակա միջավայրի մասին գիտելիքների տիրապետում, անձի բնապահպանման կրթվածության ձեւավորում, բնապահպանական հիմնախնդիրների լուծման փորձի եւ գիտելիքների ձեռքբերում, գործնական բնապահպանական աշխատանքի եւ այլ կենսաբանական ուղղությունների մեջ ներգրավում, գյուղատնտեսության ճյուղերի՝ ծաղկաբուծության, անտառապատման, այգեգործության, սնկաբուծության եւ թռչնաբուծության վերաբերյալ գիտելիքների, հմտությունների ձեւավորումը,
4. գիտա-տեխնիկական. ապահովում է սաների, սովորողների եւ ունկնդիրների կողմից տեխնիկա-տեխնոլոգիական կարողությունների եւ հմտությունների ձեռքբերում, գիտական

աշխարհայացքի ընդլայնում, ակտիվ գիտա-հետազոտական աշխատանքներին նախապատրաստում, ժամանակակից տեխնիկայի եւ տեխնոլոգիաների տիրապետում,

5. փորձա-փորձարարական. նպաստում է սաներին, սովորողներին եւ ունկնդիրներին գիտության, տեխնիկայի, մշակույթի եւ արվեստի տարբեր ոլորտների գիտահետազոտական, փորձարարական, կոնստրուկտորային եւ հնարագիտական աշխատանքների մեջ ներգրավելուն, ինչպես նաեւ երիտասարդ տաղանդների եւ շնորհալիների համար ստեղծագործական ինքնակատարելագործման, բացահայտման, զարգացման եւ աջակցության համար պայմանների ստեղծմանը,

6. մարմնամարզական-սպորտային կամ սպորտային. ապահովում է սաների, սովորողների եւ ունկնդիրների ֆիզիկական ընդունակությունների զարգացումը, լիարժեք կազդուրման, կոփման, բովանդակալից հանգստի եւ ժամանցի, մարմնամարզությամբ եւ սպորտով զբաղվելու համար անհրաժեշտ պայմաններ, սպորտային պաշարների նախապատրաստում հավաքական խմբերի համար, առողջ կենսակերպի հմտությունների ձեռքբերում,

7. ռազմա-հայրենասիրական. ապահովում է սաների, սովորողների եւ ունկնդիրների ռազմական ծառայության նախապատրաստման ենթակա մակարդակը, հայրենասիրական զգացումների եւ քաղաքացիական պատասխանատվության դաստիարակումը,

8. գրադարանային-մատենագիտական. ուղղված է սաների, սովորողների եւ ունկնդիրների ճանաչողական հետաքրքրությունների խորացմանը, նրանց տեղեկատվական կրթվածության բարձրացմանը, տեղեկատվության աճող հոսքի մեջ կողմնորոշվելու ունակությունների եւ հմտությունների ձեռքբերմանը,

9. սոցիալ-վերականգնողական. ապահովում է սաների, սովորողների եւ ունկնդիրների հետաքրքրությունների, ընդունակությունների, հակումների, պահանջների սոցիալական կայացումն ու զարգացումը, նրանց նախապատրաստումը ակտիվ մասնագիտական եւ հասարակական գործունեությանը, նրանց բովանդակալից ժամանցի եւ հանգստի կազմակերպումը,

10. կազդուրողական. ապահովում է բովանդակալից հանգստի համար անհրաժեշտ պայմաններ եւ նախատեսում է սաների, սովորողների եւ ունկնդիրների կողմից առողջ կենսակերպի մասին գիտելիքների տիրապետում, նրանց կազդուրման կազմակերպումը, հմտությունների ձեռքբերումն ու ամրապնդումը, անձնական առողջության ամրացում եւ անհատի հիգենիկ կրթվածության ձեւավորում,

11. հումանիտար. ապահովում է սաների, սովորողների եւ ունկնդիրների ընդունակությունների, ձիրքերի, գործնական հմտությունների զարգացումը, սոցիալ-հումանիտար շարքի գիտությունների հիմունքների գծով գիտելիքների տիրապետում:

Հոդված 15. Արտադպրոցական ուսումնական հաստատության դասընթացների տեսողությունը եւ աշխատանքի ռեժիմը

Արտադպրոցական ուսումնական հաստատությունների դասընթացների տեսողությունը սահմանվում է ուսումնական պլաններին եւ ծրագրերին համապատասխան առանձին տարիքային խմբերի հոգեբանաֆիզիոլոգիական զարգացման եւ թույլատրելի ծանրաբեռնվածության հաշվառմամբ՝ հետեւյալ սանդղակով.

5-ից 6 տարեկան տարիքային խմբերի համար 30 րոպե

6-ից 7 տարեկան տարիքային խմբերի համար 35 րոպե

այլ խմբերի համար 45 րոպե

Ամենօրյա աշխատանքի ռեժիմը սահմանվում է արտադարձարտական ուսումնական հաստատության կողմից կառավարման համապատասխան մարմնի /կամ հիմնադրի/ երաշխավորությամբ:

Արտադարձարտական ուսումնական հաստատությունն ապահովում է ուսուցման, կրթության եւ աշխատանքի անվտանգ պայմաններ:

Արտադարձարտական ուսումնական հաստատության ուսումնական տարվա տեսողությունը սահմանվում է կառավարման համապատասխան մարմնի /կամ հիմնադրի/ կողմից:

Հոդված 16. Արտադարձարտական կրթության կազմակերպման ձեւերը

1. Սաների, սովորողների եւ ունկնդիրների արտադարձարտական կրթությունն իրականացվում է տարբերակված՝ անհատական հնարավորություններին, հետաքրքրություններին, հակումներին, ընդունակություններին, առողջական վիճակին համապատասխան:

Արտադարձարտական կրթության իրականացման ձեւերն են պարապմունքները, խմբակային աշխատանքը, ակումբային աշխատանքը, դասընթացները, դասախոսությունները, անհատական պարապմունքները, կոնֆերանսները, ընթերցանությունը, վիկտորինան, համերգը, մրցույթը, մարզումը, փորձը, արշավը, էքսկուրսիան, լաբորատորիաներում, ջերմոցներում, գիտափորձարարական հողամասերում, գյուղատնտեսական եւ արդյունաբերական ձեռնարկություններում, բնության մեջ եւ արտադարձարտական ուսումնական հաստատության կանոնադրությամբ նախատեսված այլ ձեւերով գործնական աշխատանքը:

2. Արտադարձարտական ուսումնական հաստատություններում խմբերի եւ այլ կազմակերպական ձեւերի միջին հագեցվածությունը, որպես կանոն, կազմում է 10-15 սան, սովորող եւ ունկնդիր:

Խմբերի սահմանային հագեցվածությունը սաների, սովորողների եւ ունկնդիրների զարգացմանը, նրանց տարիքային խմբերին, հմտության մակարդակին համապատասխան սահմանվում է արտադարձարտական ուսումնական հաստատությունների կանոնադրությամբ:

Խմբերի հագեցվածությունը սահմանում է արտադարձարտական ուսումնական հաստատության տնօրենը՝ կախված ուսումնա-դաստիարակչական գործընթացի կազմակերպման հնարավորություններից եւ ուղղվածությունից:

Անհատական ուսուցում նախատեսող խմբերի թվային կազմը չի կարող գերազանցել 5 սանը, սովորողը եւ ունկնդիրը:

Արտադարձարտական ուսումնական հաստատություններում անհատական եւ խմբային աշխատանքի կազմակերպման կարգը հաստատում է կառավարման համապատասխան մարմինը /կամ հիմնադիրը/:

3. Արտադարձարտական ուսումնական հաստատություններն իրենց շրջանավարտներին տալիս են արտադարձարտական կրթության վերաբերյալ համապատասխան փաստաթղթեր / վկայականներ/:

Վկայականների ձեւերը հաստատում է կրթության ոլորտի պետական կառավարման լիազորված մարմինը:

Պետական արտադարձարտական ուսումնական հաստատությունների համար վկայականների պատրաստումն իրականացվում է պետական բյուջեի հաշվին:

Մասնավոր արտադարձարտական ուսումնական հաստատությունների համար վկայականների պատրաստումն իրականացվում է հիմնադիրների / սեփականատերերի/ միջոցների հաշվին:

Գլուխ IV

Արտադպրոցական ուսումնական հաստատության ուսումնա-դաստիարակչական գործընթացի մասնակիցները

Հոդված 17. Արտադպրոցական ուսումնական հաստատության ուսումնա-դաստիարակչական գործընթացի մասնակիցները

Արտադպրոցական ուսումնական հաստատության ուսումնա-դաստիարակչական գործընթացի մասնակիցներն են.

- սաները, սովորողները, ունկնդիրները,
- արտադպրոցական ուսումնական հաստատության տնօրենը, փոխտնօրենները,
- մանկավարժական աշխատակիցները, հոգեբանները, սոցիալական մանկավարժները, գրադարանավարները, ուսումնա-դաստիարակչական գործընթացում ներգրավված մասնագետները,
- ծնողները կամ նրանց փոխարինող անձինք,
- ուսումնա-դաստիարակչական գործընթացի իրականացմանը մասնակցող ձեռնարկությունների, հաստատությունների, կազմակերպությունների ներկայացուցիչները:

Հոդված 18. Արտադպրոցական ուսումնական հաստատությունների սաների, սովորողների եւ ունկնդիրների իրավունքները, պարտականությունները եւ սոցիալական պաշտպանությունը

1. Արտադպրոցական ուսումնական հաստատության սաների, սովորողների եւ ունկնդիրների իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են ՀՀ Սահմանադրությամբ, «Կրթության մասին» ՀՀ օրենքով, սույն օրենքով եւ այլ նորմատիվ-իրավական ակտերով:
2. Պետությունն իրականացնում է արտադպրոցական ուսումնական հաստատության սաների, սովորողների եւ ունկնդիրների իրավունքների պաշտպանությունը եւ ապահովում է բազմազավակ ընտանիքների անչափահաս երեխաների, հաշմանդամ, որբ եւ ծնողական խնամքից զուրկ երեխաների դաստիարակման եւ կրթության կազմակերպումը՝ օրենսդրությամբ:
3. Արտադպրոցական ուսումնական հաստատության սաների, սովորողներին եւ ունկնդիրների աշխատանքների եւ ուսումնական գործընթացի հետ չկապված միջոցառումների իրականացմամբ՝ ուսումնառության ժամանակի հաշվին, արգելվում է:
4. Պետական կառավարման մարմինները սահմանում են գյուղական, համայնքային, քաղաքային, մարզային, հանրապետական եւ միջազգային մրցույթների, մրցախաղերի, օլիմպիադաների, ցուցահանդեսների հաղթողների բարոյական խթանման եւ նյութական խրախուսման տարբեր տեսակներ:
5. Արտադպրոցական ուսումնական հաստատության սաները, սովորողները եւ ունկնդիրները ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգով իրավունք ունեն արտոնյալ կամ անվճար պայմաններով այցելել թանգարաններ, պատմաճարտարապետական հուշարձաններ:
7. Անկախ ենթակայությունից, սեփականության ձեւից եւ տեսակից արտադպրոցական ուսումնական հաստատությունների սաները, սովորողները եւ ունկնդիրներն անվճար բուժսպասարկման իրավունք ունեն պետական կառավարման համապատասխան մարմինների կողմից սահմանված առողջապահական հիմնարկներում:
8. Սույն օրենքին համապատասխան տեղական ինքնակառավարման մարմինները կարող են սահմանել սաներին, սովորողներին եւ ունկնդիրներին քաղաքային եւ մերձքաղաքային տրանսպորտով երթեւեկելու արտոնություններ:

Հողված 19. Արտադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատակիցները

1. Արտադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատակիցը պետք է լինի բարձր հատկանիշներով օժտված անձ, ունենա բարձրագույն մանկավարժական կամ այլ մասնագիտական կրթություն, մասնագիտական պատրաստվածության անհրաժեշտ մակարդակ, իրականացնի մանկավարժական գործողություն, ապահովի իր աշխատանքի արդյունավետությունն ու որակը, եւ որի առողջության ֆիզիկական եւ հոգեկան վիճակը թույլ է տալիս կատարել մասնագիտական պարտականություններ արտադպրոցական ուսումնական հաստատություններում:

2. Արտադպրոցական կրթության համակարգի մանկավարժական աշխատակիցների պաշտոնների ցանկը սահմանում է հիմնադիրը:

3. Անկախ ենթակայությունից, սեփականության ձեւից եւ տեսակից, արտադպրոցական ուսումնական հաստատության ղեկավարի պաշտոնը կարող է զբաղեցնել ՀՀ քաղաքացի հանդիսացող անձը, որն ունի բարձրագույն մանկավարժական կրթություն, առնվազն 3 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ:

4. Արտադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատակիցների իրավունքները, պարտականություններն ու սոցիալական երաշխիքները սահմանվում են ՀՀ Սահմանադրությամբ, «Կրթության մասին» ՀՀ օրենքով եւ այլ նորմատիվ-իրավական ակտերով:

Արտադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատակիցներին տրվում է տարեկան հերթական արձակուրդ՝ ոչ պակաս, քան 48 օրացուցային օր տեւողությամբ:

Հողված 20. Արտադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատակիցների մանկավարժական ծանրաբեռնվածությունը

1. Արտադպրոցական ուսումնական հաստատության խմբակների, բաժանմունքների, ստուդիաների, ակումբների, ստեղծագործական միավորումների ղեկավարների մանկավարժական ծանրաբեռնվածությունը ներառում է 18 ուսումնական ժամ՝ ուսումնական շաբաթվա կտրվածքով, ինչն էլ կազմում է տարիֆային դրույքը, ինչպես նաեւ մանկավարժական գործունեության այլ տեսակներ՝ տարիֆային դրույքի նկատմամբ հետեւյալ հարաբերությամբ.

արհեստանոցների վարումը՝ 10-15 տոկոս

ուսումնական կաբինետների, լաբորատորիաների, բնության մեկուսավայրերի, ծառաստանների, ձմեռային այգիների վարումը՝ 10-15 տոկոս

ուսումնա-փորձարարական տեղամասերի, ջերմոցների վարումը՝ 10-15 տոկոս

2. Արտադպրոցական ուսումնական հաստատության այլ տեսակների համար լրավճարների չափերն ու կարգը որոշում է ՀՀ կառավարությունը:

Արտադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժական ծանրաբեռնվածության բաշխումն իրականացնում է նրա ղեկավարը եւ հաստատում կառավարման համապատասխան մարմինը /կամ հիմնադիրը/:

3. Ուսումնական տարվա ընթացքում մանկավարժական ծանրաբեռնվածության վերաբաշխումը հնարավոր է սահմանված կարգով ուսումնական պլանով նախատեսված ժամերի քանակի փոփոխության պատճառով կամ մանկավարժական աշխատակցի գրավոր համաձայնությամբ:

Հողված 21. Արտադպրոցական կրթության համակարգի աշխատանքային հարաբերությունները

1. Արտադպրոցական կրթության համակարգի աշխատանքային հարաբերությունները կարգավորվում են աշխատանքային օրենսդրությամբ, «Կրթության մասին» ՀՀ օրենքով, սույն օրենքով եւ այլ նորմատիվ-իրավական ակտերով:
2. Արտադպրոցական ուսումնական հաստատության ղեկավարի նշանակումը եւ պաշտոնից ազատումը իրականացվում է տվյալ հաստատության կանոնադրությանը համապատասխան:
3. Արտադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժական եւ այլ աշխատակիցների նշանակումն ու պաշտոնից ազատումն իրականացնում է նրա ղեկավարը:

Հոդված 22. Արտադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատակիցների պատրաստումն ու որակավորման բարձրացումը

1. Արտադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատակիցների պատրաստումն իրականացնում են մանկավարժական եւ այլ բարձրագույն ու միջին մասնագիտական ուսումնական հաստատությունները, լրացուցիչ կրթական ծրագրեր իրականացնող այլ հաստատությունները:
2. Պետական արտադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատակիցների որակավորման բարձրացումն իրականացվում է ոչ պակաս, քան 5 տարին մեկ անգամ՝ պետական բյուջեի միջոցների հաշվին:

Մասնավոր արտադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատակիցների որակավորման բարձրացումն իրականացվում է ոչ պակաս, քան 5 տարին մեկ անգամ սեփականատիրոջ /հիմնադրի/ միջոցների հաշվին:

Հոդված 23. Արտադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատակիցների արեստավորումը

1. Անկախ ենթակայությունից, սեփականության ձեւից եւ տեսակից, արտադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատակիցների ատեստավորումը, որպես կանոն, իրականացվում է 5 տարին մեկ անգամ, կրթության ոլորտի պետական կառավարման լիազորված մարմնի կողմից հաստատված, մանկավարժական աշխատակիցների ատեստավորման կարգին համապատասխան:

Գլուխ V

Արտադպրոցական ուսումնական հաստատության ֆինանսա-տնտեսական գործունեությունն ու նյութա-տեխնիկական բազան

Հոդված 24. Արտադպրոցական ուսումնական հաստատության ֆինանսա-տնտեսական գործունեությունը

1. Արտադպրոցական ուսումնական հաստատության ֆինանսա-տնտեսական գործունեությունն իրականացվում է տվյալ ոլորտը կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, սույն օրենքին եւ այլ նորմատիվ-իրավական ակտերին համապատասխան:
2. Պետական արտադպրոցական ուսումնական հաստատության ֆինանսավորումն իրականացվում է պետական բյուջեի միջոցների հաշվին, իսկ մասնավոր արտադպրոցական ուսումնական հաստատությունների ֆինանսավորումը՝ հիմնադիրների /սեփականատերերի/ միջոցների հաշվին:

Պետական եւ մասնավոր արտադպրոցական ուսումնական հաստատությունների ֆինանսավորումը կարող է իրականացվել նաեւ օրենսդրությամբ չարգելված ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրների հաշվին:

Բազմազավակ եւ անապահով ընտանիքների, հաշմանդամ, որբ եւ ծնողական խնամքից զուրկ երեխաներն ստանում են անվճար արտադպրոցական կրթություն:

3. Արտադպրոցական ուսումնական հաստատության ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներ են՝

- լրացուցիչ կրթական ծառայությունների տրամադրման դիմաց միջոցները, ձեռնարկությունների, հաստատությունների, կազմակերպությունների եւ քաղաքացիների պատվերով արտադպրոցական ուսումնական հաստատությունների կողմից իրականացված աշխատանքների, սեփական արտադրանքի իրացումից, շենքերը, սարքավորումները վարձակալությամբ տրամադրելուց ստացված եկամուտները, որոնք ուղղվում են արտադպրոցական ուսումնական հաստատության սոցիալական կարիքներն ու զարգացմանը,

- մարդասիրական օգնությունը,

- ձեռնարկություններից, հաստատություններից, կազմակերպություններից ու առանձին քաղաքացիներից ստացված կամավոր դրամական մուծումներն ու նյութական արժեքները:

Ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրների հաշվին ստացված միջոցները արտադպրոցական ուսումնական հաստատությունն օգտագործում է իր կանոնադրությամբ նախատեսված գործունեության ուղղությամբ:

4. Պետական արտադպրոցական ուսումնական հաստատությունների բյուջետային ֆինանսավորումը չի կարող կրճատվել կամ դադարեցնել՝ նշված հաստատություններում ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրների առկայության դեպքում:

Ընթացիկ տարում արտադպրոցական ուսումնական հաստատության չօգտագործված արտաբյուջետային միջոցները չեն կարող բռնագրավվել՝ բացառությամբ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

Հոդված 25. Արտադպրոցական ուսումնական հաստատության նյութա-տեխնիկական բազան

1. Արտադպրոցական ուսումնական հաստատությունը տիրապետում, օգտագործում եւ տնօրինում է գույքը, հողամասը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

Ուսումնա-դաստիարակչական աշխատանքների իրականացման համար արտադպրոցական ուսումնական հաստատություններին, օգտագործման համար կամ վարձակալությամբ, անվճար կամ արտոնյալ պայմաններով, տրամադրվում են սպորտային օբյեկտներ, կազդուրողական եւ այլ հաստատություններ: Նշված օբյեկտները օգտագործման համար կամ վարձակալությամբ տրամադրելու կարգը սահմանվում է պետական կառավարման տեղական մարմինների կողմից՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

2. Արտադպրոցական ուսումնական հաստատության նյութա-տեխնիկական բազայի նկատմամբ պահանջները որոշվում են համապատասխան շինարարական եւ սանիտարա-հիգիենիկ նորմերով, արտադպրոցական ուսումնական հաստատության կազմակերպման ու պահպանման կանոններով եւ ստանդարտներով, ուսումնական պլաններով ու ծրագրերով: Արտադպրոցական ուսումնական հաստատության նյութատեխնիկական բազային են վերաբերվում նրա սեփականությունը հանդիսացող կամ լրիվ տնտեսվարման, օպերատիվ կառավարման տակ գտնվող, վարձակալված կամ հիմնադրի /սեփականատիրոջ/ կողմից տրամադրված շենքը, շինությունները, սարքավորումները, կապի միջոցները, տրանսպորտային միջոցները, հողամասերը, շարժական եւ անշարժ գույքը:

Արտադպրոցական ուսումնական հաստատությունն ինքնուրույն տնօրինում է տնտեսական եւ այլ տեսակի գործունեությունից ստացված միջոցները՝ իր կանոնադրությանը համապատասխան: Արտադպրոցական ուսումնական հաստատությունն անվճար օգտվում է հողատարածություններից, որոնց վրա գտնվում է եւ պատասխանատվություն կրում բնական ռեսուրսների արդյունավետ օգտագործման եւ վերականգնման համար:

3. Պետական արտադարձացական ուսումնական հաստատության գույքը հիմնադիրը կարող է վերցնել միայն պայմանով, որ այդ գույքի եւ նրա իրացումից ստացված միջոցների հետագա օգտագործումը կուղղվի արտադարձացական կրթության զարգացմանը: Մասնավոր արտադարձացական ուսումնական հաստատության լուծարման դեպքում գույքն ու միջոցները օրենսդրությանը եւ արտադարձացական ուսումնական հաստատության հիմնադիր փաստաթղթերին համապատասխան օգտագործվում են սեփականատիրոջ /հիմնադիր/ որոշմամբ:

Հոդված 26. Արտադարձացական կրթության ոլորտի վճարովի ծառայությունները

1. Պետական արտադարձացական ուսումնական հաստատությունները կարող են մատուցել վճարովի ծառայություններ՝ կրթության ոլորտի պետական կառավարման լիազորված մարմնի կողմից սահմանված կարգով:
2. Արտադարձացական ուսումնական հաստատությունն իրավունք ունի գործունեության որոշակի տեսակների գծով իրականացնել վճարովի ծառայություններ՝ սահմանված կարգով համապատասխան լիցենզիա ստանալուց հետո:
3. Պետական արտադարձացական ուսումնական հաստատությունները չեն կարող մատուցել վճարովի ծառայություններ՝ ուսումնական պլաններով ու ծրագրերով սահմանված կրթական գործունեության փոխարեն կամ սահմաններում: Վճարովի ծառայություններ կարող են մատուցել արտադարձացական ուսումնական հաստատության գործունեության ուղղություններով:

Գլուխ VI

Միջազգային համագործակցությունը

Հոդված 27. Արտադարձացական կրթության համակարգի միջազգային համագործակցությունը

1. Արտադարձացական կրթության կառավարման մարմինները, արտադարձացական համակարգի հաստատություններն ու ուսումնական հիմնարկներն իրավունք ունեն համագործակցության վերաբերյալ պայմանագրեր կնքել, ուղղակի կապեր հաստատել օտարերկրյա պետությունների ուսումնական հաստատությունների եւ կրթության ոլորտի պետական կառավարման մարմինների, միջազգային կազմակերպությունների, հիմնադրամների հետ՝ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Պետությունն աջակցում է արտադարձացական կրթության համակարգի միջազգային համագործակցությանը:

Գլուխ VII

Պատասխանատվությունը արտադարձացական կրթության մասին օրենսդրությունը խախտելու համար

Հոդված 28. Պատասխանատվությունը արտադարձացական կրթության մասին օրենսդրությունը խախտելու համար

Արտադարձացական կրթության մասին օրենսդրության խախտումը առաջացնում է պատասխանատվություն՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Արտադարձացական կրթության հաստատության կողմից սաներին, սովորողներին եւ ունկնդիրներին հասցված վնասը փոխհատուցվում է Հայաստանի Հանրապետության օրենքներին համապատասխան:

Գլուխ VIII

Եզրափակիչ դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2008 թվականի հունվարի 1-ից:

2. Հոդված 19-ի մաս առաջինը՝ արտադարձական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատակցի բարձրագույն մանկավարժական կամ այլ մասնագիտական կրթության պարտադիրության եւ սույն օրենքի հոդված 19-ի մաս երրորդը՝ արտադարձական ուսումնական հաստատության ղեկավարի բարձրագույն մանկավարժական կրթության վերաբերյալ, տարածվում է այն անձանց վրա, որոնք արտադարձական ուսումնական հաստատության համապատասխան մանկավարժական աշխատակցի կամ ղեկավարի պաշտոնում կնշանակվեն սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո: